

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՀՈՐԲԱՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Գագիկ Սանդրոսյանը  
Հաստատվել է համայնքի ավագանու 19.12.2016թ. թիվ 27 որոշումով



2016թ., գ. Հոդբառեղ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2 Համայնքի սոցիալ-ճանաչման իրապիճակ	5
ՍՏՈՐԱ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ և ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2014-2016ԹԹ.	5
2.3 Համայնքում ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ	6
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ	6
2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	8
2.6 Համայնքի ուժեղ և թուօլ կողմերի, ճարտարագիտությունների և սղառնաիքների (ՈւԹՀՍ) Կերտոժոժոժոն	9
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՆԱԿՈՐՈՒՄ	10
3.1 Համայնքի զարգացման տեսլական	10
3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների սուղադրոժոժոժոժ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԻՐՆԵՐԻ ԶԱՎԵՐՂՈՒՄ	10
ԾՐԱԳԻՐ 1	10
ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ	10
ԾՐԱԳԻՐ 2	10
ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	10
ԾՐԱԳԻՐ 3	11
ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ և ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ	11
ԾՐԱԳԻՐ 4	11
ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՑԱՆՑԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	11
4. ՀԶԾ ՑԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	12
5. ՀԶԾ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ	13

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հորբատեղ համայնքը ունի 252 մշտական բնակչություն, որից շուրջ 160-ը 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման խնդիր որը օրակարգային հարց է: Համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների և հանդիպումների կազմակերպմանը: Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև «Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը»:

- Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
- Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման ջրի ցանցերի բարելավում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է փոքր ծրագրեր «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև համագործակցում է «Որգնավարական գարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հորբատեղ համայնքը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի խոյի գավառից ներգաղթած հայ ընտանիքներով: Համայնքն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են համայնքում գտնվող եկեղեցիներ ու խաչքարերը: Համայնքի տարածքում է գտնվում «Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի» (1692թ). և XIII-XIV դարերի խաչքարեր: Այն գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում՝ Եղեգնաձոր-Սելիմ մայրուղու հյուսիս-արևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 23 կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 12 կմ: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1800-1850 մ բարձրության վրա: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին, Եղեգնաձոր քաղաքին, Արտաբույնք և Շատին համայնքներին: Համայնքը սահմանակից է Արտաբույնքի, Շատինի, Եղեգիսի, Սալլիի գյուղական համայնքներին: Համայնքի առկա (ներառյալ ժամանակավոր ներկա) բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում է 253 մարդ, մշտական բնակչությունը՝ 240 մարդ, տնտեսությունների թիվը՝ 77:


Համայնքի վարչական տարածքը 1136.8 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ վարելահող՝ 6.9 հա խոտհարքեր՝ 197 հա:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, առողջության կենտրոն, մշակույթի տուն, գրադարան:

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:

Հորբատեղ համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 4889.5 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 1305 հազար դրամ:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում քաղաք Երևանում: Համայնքում այժմ գործում են 2 «Սուրբ աղբյուր և Վայոց» հեկ-եր, որտեղ աշխատում են շուրջ 12 համայնքի բնակիչ:

Համայնքում գործում է մեկ հիմնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 23 (2016թ.տվյալներով) աշակերտներ: Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 60, որից հաշմանդամության թոշակ 24, կենսաթոշակառու 36:

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքը համագործակցել և առաջիկայում շարունակելու է համագործակցել <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> հասարակական կազմակերպության հետ <<Անասնապահության զարգացում Հարավային կովկասում>> ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում:


Համայնքը ակտիվ համագործակցում է <<ՄԱԿ-ի զարգացման>> ծրագրի հետ, որի արդյունքում կառուցում են <<Պասիվ արևային ջերմոց>> համայնքում արդեն իրականացվել են փոքր ծրագրեր, և առաջիկայում նախատեսվում է շարունակել համագործակցությունը իրականացնելով նոր ծրագրեր:

Համայնքը աշխատանքներ է տանում նորից համագործակցելու <<OXFAM>> կազմակերպության հետ, որը 2014-2015թթ.կատարել է համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում:

### 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ


Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. ֆինանսական աճ չի արձանագրվել: Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:

## սեփական եկամուտներ



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 1265 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 1300 հազար դրամ:

## Հորրատեղ համայնքի 2013-2015թթ. եկամուտների և ծախսերի դինամիկան (հազար դրամ)



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 5055 հազար դրամ, 01.11.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են

3811 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 4885 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Հորբատեղ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է անխատատեղների ստեղծումը:

Համայնքն ունի միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման կարիք: Որը նույնպես օրակարգային հարց է:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների կազմակերպմանը մշակույթի տանը, այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
- Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման ջրի ցանցերի բարելավում



Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

**2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՄՀՍ) վերլուծություն**

<p><b>Ուժեղ կողմեր</b></p> <p>1. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ</p>	<p><b>Թույլ կողմեր</b></p> <p>1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին և պետության կողմից տրված ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների սակավություն</p> <p>2. Զբաղվածության խնդիր</p> <p>3. Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ</p>
<p><b>SWOT վերլուծություն</b></p>	
<p><b>Հնարավորություններ</b></p> <p>1. ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ</p> <p>2. Համագործակցության շրջանակների ընդլայնում</p>	<p><b>Վտանգներ</b></p> <p>1. Համայնքում բնակչության միգրացիայի աճ</p> <p>2. Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում</p>

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

#### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած գրուաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

#### 3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում ըստ առանձին բնագավառների:

#### ԾՐԱԳԻՐ 1

##### ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Համայնքում շատ մեծ կարևոր նշանակություն ունի միջհամայնքային Արտաբույնք-Հորբատեղ 6.5 կմ երկարություն ունեցող ճանապարհը, որը գտնվում է անմխիթար վիճակում, որն էլ կարիք ունի ասֆալտապատման: Զի գործում հասարակական ոչ մի տեսակի փոխադրամիջոց, որն էլ իր հերթին հանգեցնում է բազում խնդիրների առաջացմանը:

#### ԾՐԱԳԻՐ 2

##### ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:

Գերեզմանոցի ճանապարհի անբարեկարգ վիճակը խնդիր է համայնքի բնակիչների համար: Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ

է. առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Նախատեսվում է 2018 թվականի տարեկան պետական բյուջեի միջոցների հաշվին ամբողջությամբ բարեկարգել ճանապարհը, որի համար անհրաժեշտ է նախնական գնահատմամբ 2,0 մլն դրամ, որով նախատեսվում է բարեկարգել շուրջ 2 կմ ճանապարհ:

### **ԾՐԱԳԻՐ 3**

#### **ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ և ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ**

Հորբատեղ համայնքում այժմ իրականացվում են աղբահանման աշխատանքներ, մասնավորապես ամիսը մի քանի անգամ կազմակերպվում է կենցաղային աղբից մաքրում, կենցաղային աղբի համար դրված չեն աղբամաններ, սակայն նշված աշխատանքները բավարար չեն համայնքում ամբողջական մաքրությունը ապահովելու համար: Բացի դա համայնքում չկա աղբավայր: Աղբը անխնա թափվում է գյուղում հոսող գետերի մեջ և ափերին, որը իրական աղետ է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Հետևաբար անհրաժեշտ է համայնքում իրականացնել ամսական 10-13 աղբահանում, տեղափոխել առաջացած ամբողջ աղբը, տեղադրել համայնքում աղբամաններ, որի համար անհրաժեշտ է 5 մլն. դրամ:

### **ԾՐԱԳԻՐ 4**

#### **ՈՐՈՒԳՄԱՆ ՋՐԻ ՑԱՆՑԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**


Ոռոգումը կատարվում է ինքնահոս մայր առուների միջոցով, սակայն տեղ-տեղ բարեկարգելու անհրաժեշտություն կա, որը կկարգավորվի կիսախօղովակների տեղադրմամբ: Ընդհանուր հատվածի երկարությունը կազմում է 200մ, որի բարեկարգման համար անհրաժեշտ է 2 մլն. դրամ:

#### 4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականցվեն օգտագործելով ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, հնչյվեն նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ:

Ստորև ներկայացվում է 2017-2021թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:



- ՀՀ Պետական աջակցություն
- Համայնքի սեփական ներդրում
- Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներիժգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

## 5.2ԶԾ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարելոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները՝

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները:

- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### «Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	0	2	2	2	5	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. նախագծային աշխատանքներ 1.2. կառուցում						
Ծրագրի հիմնական գործողությունները	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 1,0 մլն դրամ Կապիտալ ծախսեր 150,0 մլն դրամ Ընդհանուր բյուջեն 151,0 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Հորբատեղ համայնքը չունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Հորբատեղ բնակավայրի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ.-2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել դեպի Հորբատեղ բնակավայր տանող ճանապարհը:						

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### «Վայոց Ձորի մարզի Հորբատեղ համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Բնակիչների բավարարվածություն հասարակական տրանսպորտի աշխատանքից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. Նախագծային աշխատանքներ 1.2. կառուցում						
Ծրագրի բյուջեն	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 4.5 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Հորբատեղ համայնքը չունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Հորբատեղ համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է կատարել աղբահանություն և տեղադրել աղբամաններ						



## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### «Վայոց Ձորի մարզի Հորբատեղ համայնքի ոռոգման ջրերի բարելավում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ենթակառուցվածքի տակ գտնվող ճանապարհների ամեն տարի անֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակառուցվածքի տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ճանապարհ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2. Բնակիչների բավարարվածություն հասարակական տրանսպորտի աշխատանքից					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. նախագծային աշխատանքներ 1.2. կառուցում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.				
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 0.5 մլն դրամ Կապիտալ ծախսեր 1.5 մլն դրամ Ընդհանուր բյուջեն 2 մլն դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Հորբատեղ համայնքը չունի:					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Հորբատեղ համայնքի բնակիչներ					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել մայր առուների կիսախողովակների տեղադրում					

ՊՐԱՄԱՆ ԱՄՈՒՆՈՒՄԵՆԵՐԺ  
 թի սովորանքը)

-2021 թթ.-)

Կայքեր/հիմքեր		Օպիտերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ				
Բարեկարգություն/ սպիտակագրություն	Պետություն- համայնք- մասնավոր հասկան համագործակցու- թյուն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում է բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հարց	Ֆինանսավորման հարցը լուծված է
դռնոր կազմակերպություն			1.0 մլն. դրամ	150.0 մլն. դրամ				
դռնոր կազմակերպություն			0.5 մլն դրամ	12.5 մլն դրամ				
դռնոր կազմակերպություն			0.5 մլն դրամ	1.5 մլն դրամ				
դռնոր կազմակերպություն			0.5 մլն դրամ	4.5 մլն դրամ				

